ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԿԻՍՈՎ ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱ, ՌԴ

Մեծարգո՛յ պրն Սարկիսով,

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները։

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ տեղեակ ենք Ձեր ազգանուէր եւ եկեղեցաշէն բազմարդիւն վաստակին։ Դիւանագիտական գործունէութեամբ Դուք կարեւոր ջանքեր էք ներդնում ի խնդիր մեր երկրի զօրացման ու առաջընթացի, նաեւ ազնիւ բարերարութիւններով սատարում հայրենաշէն տարբեր ծրագրերի իրականացմանը՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի առաւել բարօր ու բարգաւաճ լինի մեր ժողովրդի զաւակների կեանքը Հայաստանում եւ Արցախում։

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ եկեղեցասէր ոգով ու սրտաբուխ ընծայաբերումով Դուք կարեւոր ներդրում բերեցիք նաեւ Վրաստանի Հայոց Թեմի Առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգութեան աստուածահաճոյ գործին։ Փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ Տիրոջ օրհնութեամբ եւ հաւատաւոր Մեր զաւակներիդ օժանդակութեամբ բարեզարդուեց պատմական սրբավայրը, որ դարեր շարունակ իր օրհնաբեր յարկի ներքոյ է միաւորում վիրահայ բարեպաշտ մեր ժողովրդին։

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ծառայութիւնները մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն, սիրով ընդառաջ Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վազգէն եպս. Միրզախանեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը։

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ շնորհներն ու օգնակա-

նութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Ամենախնամ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ աստուածահաճոյ գործերի նորանոր յաջողութիւններ:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 30-ն հոկտեմբերի
յամի տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 928